




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՖԵՐՄԵՐԱՅԻՆ
ԱԿՈՍԲՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ



ՀՀ գյուղատնտեսությունը, ոչ միայն ագրոպարենային համակարգի, այլև ամբողջ տնտեսության առավել բարդ և աշխատատար ճյուղն է, որտեղ ներգրավված է հանրապետության աշխատանքային ռեսուրսների շուրջ 45%-ը:

Հայաստանի ընդհանուր հողային տարածքի 46,8%-ը կամ 1391,4 հազ. հա կազմում են հանդերը, որից վարելահողերը կազմում են 494,3 հազ. հա, բազմամյա տունկերը (պտղատու այգիներ և խաղողի այգիներ)՝ 63,8 հազ. հա, խոտհարքը՝ 138,9 հազ. հա, արոտավայրերը՝ 494,0 հազ. հա, իսկ անմշակ հողերը՝ 0,4 հազ. հա:

Գյուղատնտեսությամբ զբաղվում են հիմնականում բնակչության ընդհանուր թվի 45,6%-ը, ինչը ապացույցն է այն բանի, որ գյուղատնտեսությունը Հայաստանում նաև սոցիալական մեծ նշանակություն ունի: Չնայած այն հանգամանքին, որ 2006-2008 թվականներին գյուղատնտեսության ոլորտում գրանցվել էր աճ, սակայն ակնհայտ էր որոշակի կառուցվածքային խնդիրներ: Օրինակ՝ վերջին մի քանի տարիներին, թե՛ անասնապահության, թե՛ բուսաբուծության բնագավառներում նկատվել էին կայուն նվազման միտումներ: Ընդհանուր առմամբ մշակվող ցանքատարածությունները 2005թ-ին կազմում էին 332 հազ. հա, 2010թ-ին՝ 283 հազ. հա, մինչդեռ 2011թ-ին կառավարությանը հաջողվում է արձանագրել մշակվող ցանքատարածությունների աճ՝ 440 հազ. հա:

Գյուղատնտեսության կայուն աճը կարող է նպաստել ՀՆԱ-ի աճին: Գյուղացիական տնտեսությունները տնօրինում և օգտագործում են վարելահողերի 75,9%-ը, բազմամյա տնկարկների 74,4%-ը և խոտհարքների 44,9%-ը, որոնք ներկայումս ապահովում են գյուղատնտեսական մթերքների արտադրության շուրջ 98%-ը:

Շուկայական տնտեսության պայմաններում հիմնական տնտեսվարող սուբյեկտները տարբեր կազմակերպաիրավական ձևերի կազմակերպություններն են:

Երկրի Գյուղատնտեսության կայուն աճի համար պահանջվում է որոշակի քայլեր և որոշումներ իրականացնել՝

- Արդյունավետության բարձրացման միջոցով ծախսերի կրճատում, ինչի համար անհրաժեշտ նախաձեռնությունների փաթեթ ապահովել և պայմաններ ստեղծել այն իրականացնելու համար
- Տեխնոլոգիաների, ներդրումների ներգրավվածության արդյունավետության բարձրացում, գյուղատնտեսությունում ներդրումների խթանում
- Ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային հատվածներում ստեղծել բարենպաստ և ընդունելի տնտեսական միջավայր:

Այս առումով կարևոր է ֆերմերային ակումբների ուսումնասիրումը: Մեր երկրի գյուղատնտեսության զարգացման կարևոր գրավականներից մեկը՝ համատեղ ֆերմերային խմբերով-ակումբներով գործունեությունն է, ինչը հնարավորություն է տալիս միասնական աշխատանքի, փոխօգնության սկզբունքի շնորհիվ առավելագույն արդյունավետություն ապահովել ցանկացած նախագծի ու ծրագրի իրականացման հարցում: Այս տեսանկյունից, անշուշտ, ողջունելի է խոշոր ֆերմերային ակումբների-տնտեսությունների ստեղծումը: Ֆերմերային ակումբների ստեղծման և գործունեության իրականացման հիմնական սկզբունքները, այն է՝ «ֆերմերային ակումբների բաց անդամությունը, անդամների կողմից գործունեության ժողովրդավարական վերահսկողությունը, ֆերմերային ակումբների անդամների

տնտեսական մասնակցությունը, ինքնավարությունը և անկախությունը, կրթությունը, վերապատրաստումը և տեղեկատվությունը, համագործակցությունը այլ ֆերմերային ակումբների միջև, համայնքի մասին մտահոգվածությունը»:

Հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման և գյուղատնտեսական մթերք արտադրող ու վերամշակող կազմակերպությունների մասնավորեցման քաղաքականությունն ապահովեց որոշակի արդյունքներ, սակայն աստիճանաբար ի հայտ եկան նաև զարգացմանն արգելակող խոչընդոտներ:

Հիմնական խնդիրները

Գյուղատնտեսության ոլորտում արդիական խնդիրներն են՝

- Հանրապետությունում ցորենի ցանքատարածությունների տարեցտարի կրճատումը.
- Բարձր վերարտադրության սերմացուների պակասը.
- Ապօրինի գործողություններից անտառների պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը և պետությանը պատճառված վնասների նվազեցումը.
- Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և կենդանիների մթերատվության բարձրացումը, կենդանիների վարակիչ հիվանդությունների ախտորոշումը, սննդամթերքի անվտանգության լաբորատոր փորձաքննության իրականացումը.
- Գյուղատնտեսական նշանակության հողատարածքներում վնասակար օրգանիզմներով վարակվածության աստիճանի բարձր մակարդակի նվազեցումը, առողջ և բարձր բերքի ստացումը, որը կհանգեցնի գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը.
- Ֆերմերային ակումբների բնագավառում իրավական դաշտի անկատարությունը.
- Համատեղ ներդրումներով գործունեություն իրականացնելու ցանկության ու վստահության պակասը.
- Ֆերմերային ակումբների սկզբունքների և առավելությունների վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության ցածր մակարդակը.
- Գյուղատնտեսությունում կոոպերացման գործընթացը խթանող աջակցության ծրագրերի սակավությունը.
- Գյուղատնտեսությունում ֆերմերային ակումբների ներդրմանն աջակցության խորհրդատվական համակարգի կարողությունների հզորացման և դրանց գործունեության մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտությունը.
- Նոր տեխնոլոգիաների ընդունումը և կիրառումը՝ հիմնվելով, ոլորտում արդեն ունեցած, գիտելիքներին ու հմտություններին.
- Գյուղատնտեսության արտադրանքի աճը և արժեքի ավելացումը, նոր գործընկերությունների ստեղծումը:

- Հանրային ինստիտուտների, տեխնոլոգիաների օգտագործողների և ֆերմերների հատվածի ավելի սերտ համագործակցությունը
- Ֆինանսական կայունության իրականացմանն ուղղված արդյունավետ քայլեր և մրցակցությունը միջազգային ասպարեզում.
- Գյուղատնտեսության ոլորտին վերաբերող տեխնիկական վերջին նորամուծությունները ֆերմերներին փոխանցելը.
- Նրանց՝ բանկերի հետ ավելի շահավետ վարկային պայմանագրեր կնքելը.
- Բերքահավաքի արդյունավետ կազմակերպումը և շահավետ պայմաններով մթերումը.
- Բերքի վաճառքն իրականացնել առավել շահավետ արժեքով, ի օգուտ ֆերմերի և Միջոցներ ձեռք բերել շուկայում գերիշխող դիրք ունենալու համար.

Ակումբային ծրագրի նպատակն է.

Մշակել համապատասխան և առավել հարմար ռազմավարություն, իրականացնելու հետևյալ ուղղություններով

Գյուղական բնակավայրերում վարկավորման գործընթացը, նոր տեխնոլոգիաների հասանելիությունը, իրազեկվածությունը և այլն

Մտավոր ներուժի զարգացում

Բավական է նշել, որ շուրջ 400 հազար փոքր չափեր ունեցող տնտեսություններ, ունենալով հողօգտագործման, ջրօգտագործման, տեխնիկական ապահովման, արտադրանքի իրացման, մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության, ապահովվածության հետ կապված բազմաբնույթ խնդիրներ, չունեն համագործակցության հստակ և կայուն մեխանիզմներ, իսկ գյուղմթերքի արտադրությունը լեռնային և սահմանամերձ բնակավայրերում նույնիսկ չի փոխհատուցում կատարած ծախսերը:

Հանրապետությունում գյուղացիական տնտեսության միջին չափը հավասար է 1.37 հա և տատանվում է 0.61 հա Արարատյան հարթավայրում և 3.0 հա նախալեռնային ու լեռնային շրջանների համար: Միջին հաշվով 3 կտոր կազմող տնտեսության հողատարածքի մեկ կտորը ոռոգելի է, երկուսը՝ ոչ: Տնտեսությունների 88%-ն ավելի փոքր է, քան 2 հա-ն և զբաղեցնում է վարելահողերի 77%-ը: Տնտեսությունների 12%-ը ավելի մեծ է, քան 2 հա-ն և զբաղեցնում է վարելահողերի 23%-ը: Տնտեսությունների մոտ 15%-ում մշակում են նաև վարձակալած հողեր, միջինը 3.2 հեկտարի չափով, իսկ 30%-ում չեն մշակում մասամբ կամ ամբողջապես՝ հողերի վատ որակի, ջրի կամ միջոցների բացակայության, տնից հեռու գտնվելու պատճառով:

Գյուղատնտեսական ոլորտում ստեղծված իրավիճակն այն դարձնում է անարդյունավետ. Չափազանց ցածր է ապրանքային արտադրության մակարդակը, դանդաղ են ներդրվում նոր տեխնոլոգիաներն ու ժամանակակից տեխնիկական միջոցները, չի ստեղծվել վարկավորման և ապահովագրության մատչելի համակարգ: Մշակված չեն սպասարկման, մատակարարման, արտադրանքի իրացման հստակ մեխանիզմներ: Ֆերմերի համար մեծ դժվարություն են ներկայացնում սերմերի, պարարտանյութերի, թունաքիմիկատների, բուժանյութերի, խտացրած կերերի ձեռքբերումը: Գյուղատնտեսական տեխնիկայի անբավարարության, ֆիզիկական և բարոյական մաշվածության պատճառներով դեռևս բարձր են մեքենայական աշխատանքների սակագները:

Հայ ֆերմերի համար ամենածանր հոգսերից մեկն է դարձել գյուղատնտեսական մթերքների իրացումը, որը պայմանավորված է արտահանման ծավալների կտրուկ կրճատմամբ, վերամշակող ձեռնարկությունների արտադրական հզորությունների օգտագործման ցածր մակարդակով, վաճառքի մեխանիզմների անկատարությամբ: Այս ամենին գումարվում են նաև այն, որ ֆերմերներից շատերը չունեն գյուղատնտեսական արտադրության կազմակերպման անհրաժեշտ տեսական գիտելիքներ, դժվարությամբ են ընդունում գիտատեխնիկական նվաճումները: Այս առումով կարևորվում է միջին մասնագիտական կրթական համակարգի զարգացումը: Վերը նշված խնդիրների կարգավորման և ֆերմերների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով կարևորվում է «Ֆերմերների Ակումբներ»-ի ստեղծումը, որտեղ կմիավորվեն միևնույն համայնքում գործող ֆերմերները:

Ակումբների անհրաժեշտությունը և կարևորությունը

Ֆերմերային ակումբները գոյություն ունեն շուրջ երկու հարյուր տարի: Գործելով տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում, ակումբներն ավելի երկարակյաց են, քան՝ ներդրողամետ ընկերությունները: Ակումբային մոդելը մշտապես հարմարվել է փոփոխվող պայմաններին, և տնտեսական ու սոցիալական նորանոր խնդիրներին լուծում տալու համար առաջացել են ֆերմերային ակումբների նորարարական ձևեր:

Ֆերմերային ակումբները զարգացել են, մեծապես, տարբերվող քաղաքական պայմաններ, տնտեսական զարգացման աստիճան, մշակութային բնութագրեր և պատմական հենք ունեցող երկրներում: Տասնիններորդ դարի վերջին Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում ֆերմերային ակումբները կարևոր դեր էին խաղում՝ որպես տնտեսական և սոցիալական հաստատություններ: Մեփական ուժերով արդյունքի հասնելու նախաձեռնությունների հետաքրքիր օրինակներ կային Չեխիայում, Բուլղարիայում, Սերբիայում և Լեհաստանում. նախքան սոցիալիզմի մուտք գործելը այդ երկրներ: Նույն կերպ, ֆերմերային ակումբներն առանցքային դերակատարություն են ունեցել զարգացող երկրներում, թեկուզև դրանք հաճախ հաստատակարգված և նույնիսկ օրենքով կարգավորված չէին:

Ֆերմերային ակումբների հաջողության և երկարակեցության հիմնական պատճառն այն է, որ դրանք շահագրգռված են ոչ թե առավելագույնի հասցնելու ներդրողների շահույթը, այլ՝ բավարարելու համայնքի կարիքները:

Ֆերմերային ակումբներին պետք է վերաբերվել որպես հիմնախնդիրների համատեղ (կոլեկտիվ) լուծողների:

Ֆերմերային ակումբների ձևավորումը կնպաստի.

- Արտադրանքի իրացման բարելավմանը
- Արտադրանքի արտադրման վրա ծախսերի կրճատմանը
- Բերքատվության աճին
- Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը
- Գյուղական վայրերում լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը
- Ֆերմերային ակումբները կարող են կարևորագույն դեր կատարել ագրարային մասնաճյուղի արդիականացման և ապրանքի բարձր չափանիշների ներդրման մեջ:

Այսօր ժամանակակից աշխարհում ֆերմերային ակումբների մասնաճյուղը հաշվում է.

✚ 800 միլիոն անդամ 100-ից ավելի երկրում և 100 միլիոն աշխատատեղ:

Զարգացած երկրներում սննդամթերքի արտադրության մոտավորապես 80%-ն ապահովում են ֆերմերային ակումբները:

Ֆերմերային ակումբների առավելությունները

- Ակումբների անդամների եկամուտն ավել է, իսկ ծախսը՝ պակաս, քանի որ ծախսերը և ռիսկերը բաշխվում են մի քանի սուբյեկտների վրա:
- Համատեղ տնտեսական գործունեությամբ կայուն շուկան ավելի մատչելի է:
- Համատեղ մեծածախ գնումներ. Ցածր գին՝ անհրաժեշտ ագրո և այլ նյութերի գնման ժամանակ:
- Անհատական (առանձին-առանձին)՝ գյուղացիների գործունեությունն ընթանում է միայն ցածր տեխնոլոգիական մակարդակի վրա, իսկ ուժերի միավորմամբ հնարավոր է նոր տեխնոլոգիաներ ներդնել:
- Ֆերմերային ակումբները, որպես միավորում, համարվում են վարկունակ և վարկային ռեսուրսը նրանց համար ավելի մատչելի են, քան մեկուսացված սուբյեկտի՝ գյուղացու համար:

ՈՒԺԸ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ Է:

«Այնտեղ, որտեղ ամեն մեկն առանձին անգոր է, գորեղ են բոլորը միասին»:

Ֆերմերային ակումբների սկզբունքները

- Կամավորություն. Ակումբներում անդամագրումը կամավոր է:
- Ժողովրդավարություն և իրավահավասարություն. Մեկ անդամը՝ մեկ ձայն:
- Որոշումների ընդունմանը մասնակցում են բոլոր անդամները:
- Ֆինանսական ռեսուրսների միավորման հնարավորություն. Կապիտալի համատեղ կառավարում:
- Անկախություն. Ֆերմերային ակումբն անկախ մարմին է, որը վերահսկվում է անդամների կողմից:
- Կրթություն, վերապատրաստում և տեղեկատվություն. Ֆերմերային ակումբն ապահովում է անդամների կրթություն, վերապատրաստում և էֆեկտիվ զարգացում:
- Ընդհանուր շահերի շուրջ միավորում և դրանց պաշտպանություն:

Ֆերմերային ակումբները կարողացել են բարգավաճել նաև այն պատճառով, որ դրանք ունեն բնորոշ առավելություններ՝ համեմատած ներդրողամետ կազմակերպությունների հետ, այն իմաստով, որ ստանձնում են այնպիսի դերակատարություն, որ ներդրողամետ կազմակերպություններն անկարող են կամ չեն կամենում իրականացնել:

Միջնորդավճարները և մանրածախ գները նվազեցնելու համար ստեղծվել են օգտագործողների և սպառողների ակումբներ, արտադրողների շուկայական թույլ ներուժը հզորացնելու համար՝ գյուղատնտեսական ակումբներ, իրենց բիզնեսը ինքնակառավարելու համար՝ աշխատավորների կոոպերատիվներ: Ընդհանուր ապահովագրություն և օժանդակություն տրամադրելու համար աշխատողները և համայնքները հիմնել են փոխօգնության ընկերություններ: Իրենց անդամների կարիքները բավարարելով՝ ֆերմերային ակումբները նպաստել են հասարակության լայն և հաճախ խոցելի հատվածների կյանքի որակի բարելավմանը: Հանրային բարեկեցության բազմաթիվ նախագծեր են կյանքի կոչվել շնորհիվ ֆերմերային ակումբների կողմից արված գյուտերի և փորձարարական աշխատանքների: Բարեկեցություն ապահովող հիմնական հաստատությունները ի սկզբանե զարգացել են փոխադարձ օգնության և ակումբային խմբերի միջոցով:

Պատմական վկայությունները ցույց են տալիս, որ ֆերմերային ակումբները ոչ միայն ճգնաժամերի ժամանակ ավելի լավ են գոյատևում, քան կազմակերպությունների այլ տեսակները, այլև առավել հաջողությամբ են դիմակայում ճգնաժամերի ազդեցությանը: 1930-ականների մեծ դեպրեսիայի ժամանակ էլեկտրաէներգիայի և հեռահաղորդակցության ոլորտի կոոպերատիվներն օգնեցին վերափոխելու ԱՄՆ-ի գյուղատնտեսությունը: 1960-ականներին ֆերմերային ակումբների շարժում սկսվեց Նյու Յորքում, որում ներգրավվեցին 27000 ընտանիքներ: Իսկ 1970-ականների արմատական վերակառուցման ժամանակ Եվրոպայում ավելացավ աշխատավորական կոոպերատիվների թիվը, ընդ որում այդ կոոպերատիվների շրջանում ձախողումների թիվն ավելի ցածր էր, քան՝ շահույթ հետապնդող ընկերությունների շրջանում: 2008-2009թթ. ճգնաժամը ևս մեկ անգամ վկայում է ֆերմերային ակումբների ուժի և ճկունության մասին:

Ֆերմերային ակումբների շարժման մասշտաբները գնահատելու համար անհրաժեշտ է իրականացնել այդ հատվածի ընդհանուր չափի իրատեսական գնահատում: Աշխարհի մասշտաբով երեք անգամ ավելի մեծ թվով ֆերմերային ակումբների անդամ սեփականատերեր կան, քան՝ բաժնետիրական ընկերությունների անհատ բաժնետերեր, իսկ արագ զարգացող երկրներում (Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան) ֆերմերային ակումբների անդամների թիվը չորս անգամ է գերազանցում բաժնետերերի թվին: Ֆերմերային ակումբների ընդհանուր անդամակցությունը կազմում է 800 մլն-ից մինչև 1 մլրդ մարդ: Ֆերմերային ակումբները գործում են բոլոր երկրներում, ընդ որում դրանց կարևորությունը հատկապես մեծ է աղքատ համայնքներում:

Եվրոպական երկրներում ֆերմերային ակումբների գումարային շուկայաբաժինը կազմում է մոտ 60% գյուղատնտեսական մթերքների վերամշակման ու իրացման բնագավառում և մոտավորապես 50% մասնաբաժին ներդրանքների մատակարարման բնագավառում: ԱՄՆ-ում ֆերմերային ակումբների շուկայաբաժինը կազմում է գյուղատնտեսական մթերքների վերամշակման և իրացման շուկայի մոտ 28%-ը և ներդրանքների մատակարարման շուկայի 26%-ը: Իսկ գերմանացի ֆերմերներն ամբողջովին ապահովում են երկրի սննդամթերքի կարիքները: Բացառություն են կազմում միայն ցիտրուսային բույսերը և այն արտադրանքները, որոնք այլ երկրներից են ներմուծվում:

Ինչպես ստեղծել ֆերմերային ակումբներ

Առաջին քայլ. Անհրաժեշտ է բարձրալեռ տարածաշրջանում առնվազն 3, իսկ մնացած տարածքում՝ առնվազն 5 մարդու միավորում ընդհանուր գաղափարի շուրջ:

Երկրորդ քայլ. Ստեղծել ֆերմերային ակումբի կանոնադրություն:

Երրորդ քայլ. Միավորմամբ հետաքրքրված անձինք հայտագրվեն հանրային ռեսսորում՝ ֆերմերային ակումբի կազմակերպչական ձևով:

Չորրորդ քայլ. Ֆերմերային ակումբի կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնեն «Ֆերմերային ակումբների զարգացման գործակալություն»:

Ֆերմերային ակումբները դրամաշնորհ ստանալու և պետության կողմից սահմանված աջակցության ծրագրերից օգտվելու իրավունք ունի:

«Դրամաշնորհների մասին» օրենքում իրականացված փոփոխությունների հետևանքով, ֆերմերային ակումբները սահմանվել են որպես դրամաշնորհ ստացող, անկախ նրա արտադրող սուբյեկտ լինելուց:

Ֆերմերային ակումբներում աշխատողները սահմանված կարգով կարող են անվճար ստանալ ուսուցում-վերապատրաստում և որակակալորման բարձրացման ծրագրեր:

Ֆերմերային ակումբները պետք է դիտել որպես մասնավոր ձեռնարկատիրության այնպիսի ձև, որը պատկանում է իր անդամներին, համատեղ վերահսկվում է նրանց կողմից և ծառայություններ է մատուցում նրանց համար:

Ֆերմերային ակումբների նպատակները հիմնականում տնտեսական են: Դյուրին գործ չէ ակումբների ստեղծումը և հաջող զարգացումը: Ընդհանուր առմամբ, ժամանակատար և բարդ գործընթաց է: Շուկայական պայմանները, կառավարության քաղաքականությունը, ինչպես նաև իրավական դաշտը պետք է նպաստեն ֆերմերային ակումբների զարգացմանը: Դրա հետ մեկտեղ, կարևոր նախապայման են կառավարության հմտությունները և ունակություններ ունեցող ուժեղ առաջնորդների ընտրությունը և բավարար ֆինանսական ռեսուրսների առկայությունը:

Շուկայամետ բարեփոխումների, սեփականաշնորհման և ապակենսրոնացման ներկայիս միտումների ազդեցության ներքո ֆերմերային ակումբներն իրավացիորեն դիտվում է որպես գյուղացիների տնտեսական նախաձեռնությունները կյանքի կոչող, կայուն զարգացում և արդյունավետ կառավարում իրականացնելու ամենահարմար կազմակերպական ձևը:

Ասվածի լավագույն վկայությունն է բազմաթիվ պետությունների, դոնոր և հասարակական կազմակերպությունների կողմից գյուղատնտեսության զարգացման գործում ֆերմերային ակումբների կարևորության շեշտադրումը: Այդուհանդերձ, պետությունը չպետք է միջամտի ֆերմերային ակումբների ստեղծմանը և կառավարմանը: Կառավարության խնդիրը դրանց ստեղծմանն աջակցող, իրավական և տնտեսական բարենպաստ միջավայր ձևավորող գործառնությունների իրականացումն է:

Հայաստանի Հանրապետությունում ֆերմերային ակումբների շարժման ընդհանուր բնութագիրը և վիճակագրությունը

Հայաստանի ագրոպարենային ոլորտի առջև ներկայումս ծառացած խնդիրների բնույթից ակնհայտ է, որ գյուղատնտեսության և ագրոգործարարության հաջող զարգացումն էապես պայմանավորված է ֆերմերային ակումբների արմատավորմամբ և զարգացմամբ: Շուկայական հարաբերությունների պայմաններում ֆերմերային ակումբները կարող են համակարգել տարբեր գործառնություններ, ինչպես գյուղմթերքի արտադրության, այնպես էլ սպասարկումների, իրացման և մատակարարման գործընթացում: Ֆերմերային ակումբների գաղափարի իրականացումը պայմանավորված է գյուղատնտեսության ոլորտում նշված այնպիսի խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, ինչպիսիք են գյուղմթերքի իրացման դժվարությունները, սպասարկումների, ոլորտում օգտագործվող հիմնական ռեսուրսների տեխնիկայի, վառելանյութերի, պարարտանյութերի և այլնի ոչ մատչելիությունը:

Հայաստանի Հանրապետությունում բազմաթիվ միջազգային և պետական ծրագրեր և միջոցառումներ ուղղված են եղել խթանելու ֆերմերային ակումբների ձևավորումը և զարգացումը:

Որոնք են ֆերմերների ակումբները

Երիտասարդ ֆերմերների ակումբը կամավոր հասարակական ձևավորում է, որը ստեղծվել է իր մասնակիցների շահերի միասնության հիման վրա՝ ագրոարդյունաբերական համալիրի ոլորտում, իրենց շահերը գիտակցելու և բավարարելու նպատակով: Ֆերմերային ակումբներն իրենց անդամների կողմից վերահսկվող ինքնավար կազմակերպություններ են: Այսինքն՝ անդամներն ակտիվորեն մասնակցում են ակումբի քաղաքականության մշակմանն ու որոշումների կայացմանը: Անդամների մեծ թվաքանակ ունեցող ֆերմերային ակումբներում անմիջական վերահսկողությունն իրականացնում են որոշակի կանոնակարգով ընտրված ներկայացուցիչները, ովքեր հաշվետու են ակումբների անդամների առջև: Որպես կանոն, ակումբներում անդամներն ունեն հավասար ձայնի իրավունք (մեկ անդամ, մեկ ձայն):

Ակումբի ստեղծումը կարող է հնարավորություն տալ ֆերմերներին, համատեղ աշխատանքում, փորձի փոխանակում ունենալ և նոր գիտելիքներ ձեռք բերել: Ակումբի անդամները կարող են լինել ագրոարդյունաբերական համալիրում աշխատողներ, տնտեսությունների ղեկավարներ:

Երիտասարդ ֆերմերների ակումբ ստեղծելու մասին որոշումը կայացվել է բնակչության իրավագիտակցության ցածր մակարդակի պատճառով: Ակումբներում կանոնավոր հանդիպումները կկարողանան անվճար իրավաբանական խորհրդատվություն և օգնություն տրամադրել բոլոր նորեկ ֆերմերներին, ովքեր ունեն լավ ձեռքբերումներ, հաջողություններ, բայց բավարար չեն իրազեկված, օրենսդրությամբ տրված, իրենց իրավունքների մասին: Ինչպես նաև նրանք կարող են տեղեկություններ ստանալ, տարածաշրջանում, այլ տնտեսությունների մասին, հետազայում փորձի փոխանակման նպատակով:

Ամենապարզ սահմանմամբ՝ ֆերմերային ակումբները ապրանքներ և ծառայություններ արտադրելու և մատակարարելու նպատակով կամավոր սկզբունքով ստեղծված տնտեսական միավորներ են, որի անդամներն իրականացնում են կառավարումը և համատեղ բաժանում առաջացած ռիսկերն ու շահույթը:

Ֆերմերներային ակումբներում կարող են քննարկել ագրոբիզնեսի զարգացման ամենահեռանկարային ուղղությունների, գյուղատնտեսական կոոպերատիվներին առընչվող խնդիրների լուծումները, բերքի մշակման և մարկետինգի կազմակերպման հարցերը: Ֆերմերները կարող են հարց բարձրացնել իրենց տնտեսությունների և գյուղական վայրերում փոքր բիզնեսի զարգացման նպատակով, պետության կողմից ֆինանսական աջակցության ստանալու վերաբերյալ:

Ֆերմերների ակումբների անդամներին պետք է.

- Արդիական տեխնոլոգիաների ներդրման և տեխնիկական հագեցվածության աջակցություն
- Պետական ծրագրերում և պետական գնումներում, որպես գործընկեր, ֆերմերային տնտեսությունների առաջնահերթության ապահովում
- Ֆերմերային ակումբների և գյուղատնտեսական մթերքի (հումքի) արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների (գյուղացիական տնտեսությունների) հարկման և պետական աջակցության այլ պայմանների համա-հավասարեցում
- Գյուղատնտեսական հումք վերամշակող, գյուղատնտեսությունում օգտագործվող ռեսուրսներ մատակարարող և արտադրանքն իրացնող ընկերությունների հետ պայմանագրային հարաբերությունների հաստատման աջակցություն
- Արտահանման ներուժ ունեցող ֆերմերային ակումբների արտադրանքի մրցունակությունն արտերկրներում բարձրացնելու նպատակով՝ բիզնես-ֆորումների, ցուցահանդեսների, տոնավաճառների կազմակերպմանն աջակցություն
- Խորհրդատվության, ուսուցման և արժանահավատ տեղեկատվության տրամադրման աջակցություն
- Ներքին շուկայի և տեղական արտադրողների շահերի պաշտպանություն
- Գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրմանն աջակցություն
- Գյուղատնտեսական վարկերի մատչելիության բարձրացմանն ուղղված քաղաքականության իրականացում
- Սննդամթերքի անվտանգության ապահովման և օրգանական գյուղատնտեսության զարգացմանն ուղղված պետական ծրագրերի իրականացում
- Հողերի բարելավման, ոռոգման, առաջնային սերմնաբուծության, բույսերի պաշտպանության, տոհմաբուծության և անասնաբուծության բնագավառներում միջոցառումների ֆինանսավորում
- Ֆերմերային ակումբների կարևորության ընկալմանն ուղղված ծրագրերի իրականացում

- Կրթության, վիճակագրության, հետազոտությունների գործընթացում ֆերմերային ակումբների առաջնահերթ ներառում
- Կարգավորել բարենպաստ հարաբերություններ բանկերի հետ, և ապահովել վարկերի մուտք
- Կազմակերպել ամսական նվազագույն մեկ հանդիպում-խորհրդակցություն և կախված առկա խնդիրներից՝ մինչև, ամսական 2-3 հանդիպում: Անդամները կարող են հրավիրվել նաև մասնակցելու նիստերին
- Գյուղատնտեսության տարբեր ոլորտներում առարկայական մասնագետների հետ սերտ համագործակցություն, այդ թվում նաև գյուղատնտեսական բուհերի հետ
- Դասախոսություններ սկսնակ ֆերմերների, անհրաժեշտության դեպքում նաև փորձառու ֆերմերների համար
- Անհրաժեշտության դեպքում խորհրդատվություն և համատեղ գործունեություն, գյուղատնտեսական բուհերի ընդլայնված անձնակազմի հետ, որի ժամանակ կարող են հրավիրվել նաև գյուղի և հարակից գյուղերից ֆերմերային ակումբի ոչ անդամները
- Ժամանակակից միջոցներ, մատակարարողների և ներմուծողների հետ, կապ ունենալու համար
- Տեխնիկական միջոցներ և անհրաժեշտ գիտելիքներ ու աշխատանքային փորձ՝ այն շահագործելու համար
- Գյուղատնտեսական արտադրանքի մարկետինգ
- Մշակել գործողությունների պլան, բերքի մշակման, արժեքի ավելացման, համայնքային աշխատանքների վերաբերյալ և այլն:

Ֆերմերների ակումբները հիմնականում ձևավորված ֆորումներ են: Նման ակումբները կազմակերպվում են, բանկի գյուղական մասնաճյուղերի, ֆինանսական աջակցությամբ: Հայաստանում արդիական է մնում ներմուծվող սննդամթերքը տեղականով փոխարինելու հարցը: Իսկ ֆերմերների կողմից արտադրվող մսամթերքը, բանջարեղենը, մրգերը և բոլոր այլ գյուղատնտեսական արտադրանքները միշտ պահաջված են, հետևաբար՝ արդիական արտադրանք են: Ֆերմերային բիզնեսը մշտապես զարգանում է և տարիների ընթացքում ավելի է հանրաճանաչ դառնում: Այս առումով երիտասարդ ֆերմերները ավելի մեծ խթան են ստանում սեփական ֆերմա բացելու համար:

Այս ոլորտը չի կորցրել իր արդիականությունը և երբեք չի կորցնի: Յուրաքանչյուր բնակիչ համարվում է ֆերմերային տնտեսությունում ստացված արտադրանքի պոտենցիալ սպառող, լինի կաթնամթերք, մսամթերք, թե՛ պտուղ-բանջարեղեն, թե՛ ձկնամթերք:

Իսկ մսամթերքի վերամշակման գործարանները, պահածոների գործարանները, ինչպես նախկինում, այսօր էլ շահագրգռված են որակյալ կաթի, մսի, միրգ-բանջարեղենի մատակարարներով:

Պոտենցիալ ֆերմերի համար առաջնային նպատակը պետք է լինի ապահովել իր բնակավայրը սեփական արտադրանքով, իսկ արտադրության աճին զուգընթաց, կարելի է մտածել տարածաշրջանային շուկա մուտք գործելու մասին: Բայց սկսնակ ֆերմերների համար նման լայնամասշտաբ գործունեություն ծավալելը և կազմակերպել ագրոֆիզները զրոյից, միշտ չէ, որ հասանելի է: Այս տեսակի գործունեության անվերապահ առավելությունը բոլոր տեսակի պետական արտոնություններն ու սուբսիդիաներն են, որոնք համեմատաբար հեշտ են տրվում սկսնակ ֆերմերին:



Ֆերմերների գործունեության հիմնական ճյուղերն են

- Անասնապահություն
- Թռչնաբուծություն
- Ձկնաբուծություն
- Բանջարաբուծություն
- Մշակաբույսերի և սերմերի արտադրություն
- Մեղվաբուծություն
- Սեփական բնական հումքից ստացված սննդամթերքի արտադրություն
- Թանկարժեք մորթի ունեցող կենդանիների բուծում
- Ծաղկաբուծություն
- Օրգանական գյուղատնտեսություն
- Տոհմաբուծություն

Ֆերմերային ակումբների նպատակները՝

Երիտասարդ ֆերմերների ակումբների ստեղծման նպատակը և նախապայմաններից մեկը ֆերմերների կենսամակարդակը մատչելի դարձնելն է, բարելավելը և կայունացնելն է՝ նրանց հնարավորություն տալով ուժեղացնել իրենց դերն ու ազդեցությունը գյուղատնտեսական արժեքաշարայում, լուծել որոշակի խնդիրներ՝ հաղթահարել գյուղամթերքի իրացման դժվարություններ, գյուղտեխնիկայի շահագործում, վառելանյութեր, սերմեր, պարարտանյութեր և այլ ռեսուրսներ: Ուստի

այս ամենն իրագործելու համար անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել գյուղական համայնքներում ակումբներ ստեղծելու ուղղությամբ՝ միավորելու մարդկանց մի գաղափարի շուրջ, այն է՝ կամավոր կերպով հիմնել ինքնավար ընկերակցություն՝ կազմակերպելով ու վերահսկելով իրենց ընդհանուր սոցիալական, տնտեսական և մշակութային կարիքներն ու ձգտումները: Ակումբներ ստեղծելու նպատակները հիմնականում տնտեսական են:



Սկսնակ ֆերմերների ակումբների առաջնահերթ խնդիրներից է աջակցել տարածաշրջանային արտադրողների, գյուղատնտեսական արտադրողներին, ֆերմերներին և փոքր հողատերերին: Ծրագիրը ներառում է առաջին հերթին արտոնյալ առևտրային վայրեր: Կարևոր է, որ այդ նախագիծը հետաքրքրի բոլորին. և՛ գնորդներին, և՛ ներդնողներին, և՛ անմիջական արտադրողներին: Կան համայնքներ որտեղ կան ազատ տարածքներ, սակայն չկան ներդրողներ, կան գործող խանութներ, որոնք լրացուցիչ մատակարարների պահանջ ունեն, և կան, ընդհակառակը, մատակարարներ՝ ֆերմերներ, որոնք փնտրում են խանութներ, իրենց ապրանքը վաճառելու համար:

Այսօր ակնհայտ է, որ քաղաքապետարանները և գյուղական տեղական իշխանությունները պետք է առաջարկեն մշակել ծրագիր-նախագիծ, բացելու ֆերմերների համար ֆիրմային խանութներ, ոչ միայն անհատական-շարժական, ոչ ստացիոնար օբյեկտներում, այլև անշարժ խանութներում, մասնավորապես՝ բնակելի շենքերի առաջին հարկերում:

Այս մոտիկությունը, մեր բնակիչների համար, միայն մեծացնում է նրանց հարմարավետությունը, հասանելի է դարձնում թարմ վիճակում ձեռք բերել մեր ֆերմերների աճեցրած միրգ բանջարեղենը և առողջ, օգտակար կաթնամթերք, մսամթերք՝ առաջարկված անմիջապես արտադրողից:



Բացի այդ, ներդրվում է գյուղատնտեսական կոոպերատիվների մարկետինգի և մշակումների համար դրամաշնորհային աջակցություն, որը կուղղվի իրենց նյութատեխնիկական բազայի, շինարարության, արդիականացման, գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման նպատակին:

Ֆերմերային ակումբներին աջակցության նպատակով, բանկերի կողմից առաջարկվում է ֆերմերներին ավելի քան 30 տեսակի վարկ, ապրանքների և ծրագրերի համար տարբեր նպատակներով: Սեզոնային դաշտային աշխատանքների, ձեռքբերումը հողի գյուղատնտեսական հողերի գնման մեքենաների և սարքավորումների, գյուղատնտեսական կենդանիների, և այլն: Յուրաքանչյուր ոք կարող է ընտրել իրեն համար, թե ինչի կարիք նա ունի:

Ֆերմերային ակումբներ ստեղծելու դերն ու նշանակությունը

Այս գաղափարը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է առաջնորդվել մի քանի հիմնական կետերով, այն է՝

- Ժողովրդավարություն
- Ինքնապատասխանատվություն
- Համերաշխություն
- Հավասարություն
- Համախմբվածություն
- Փոխադարձ օգնություն:

Ֆերմերային ակումբներ ստեղծելուց առաջ հարկավոր է հստակ պատկերացում ունենալ ակումբների ինքնության, արժեքների, սկզբունքների, նրա առավելությունների ու տարբերությունների մասին:

Կամավոր կերպով բաց անդամակցություն

Դրանք այն մարդիկ են, ովքեր ի վիճակի են և պատրաստակամ պարտավորություններ ստանձնելու որպես ակումբի անդամ՝ առանց սեռային, սոցիալական, ռասայական, քաղաքական կամ կրոնական որևէ խտրականության:

Այն ժողովրդի կողմից վերահսկվող կառույց է, որտեղ մարդիկ ակտիվորեն մասնակցում են գյուղական համայնքային քաղաքականության մշակմանն ու որոշումների կայացմանը և ունեն հավասար ձայնի իրավունք:

Անդամները նպաստում են իրենց ակումբի ունեցվածքի ձևավորման գործում և դրա օգտագործման նկատմամբ ունեն հավասար իրավունքներ:

Այն իրենց իսկ անդամների կողմից ինքնավարությունն ու անկախությունը պահպանելու պայմանով ձևավորված, վերահսկվող, ինքնավար միություն է:

Այն կրթում, իրազեկում և վերապատրաստում է հանրությանն՝ անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելով ստեղծված կազմակերպության բնույթի և օգուտների մասին:

Հիմնվելով իրենց անդամների կողմից հաստատված քաղաքականության վրա՝ բոլորն աշխատում են հանուն համայնքների կայուն զարգացման:

Ֆերմերային ակումբներ ստեղծելուց առաջ հարկավոր է հստակ պատկերացում ունենալ ակումբների ինքնության, արժեքների, սկզբունքների, նրա առավելությունների ու տարբերությունների մասին: Դրանց չիմացությունը հաճախ բերում է ծրագրի իրականացման ձախողման:

Սեփական ուժերով արդյունքի հասնելու նախաձեռնությունների հետաքրքրաշարժ օրինակներ կան:

Ըստ ՄԱԿ-ի տվյալների՝ նմանատիպ կոլեկտիվ ձեռնարկություններն ապահովում են շուրջ 3 միլիարդ մարդու, այլ խոսքով՝ աշխարհի բնակչության կեսի կենսապայմանները:

- ❖ Նորվեգիայում՝ կաթի 99%-ը
- ❖ Նոր Զելանդիայում՝ կաթի արտադրության և կաթնամթերքի արտահանման 95%-ը, ինչպես նաև մսամթերքի շուկայի 70%-ը
- ❖ Ուրուգվայում՝ արտադրվող կաթի 90%-ը, մեղրի 34%-ը և ցորենի 30%-ը, իսկ դրանց 60%-ն էլ արտահանվում է շուրջ 40 երկրներ
- ❖ Սլովենիայում՝ կաթի արտադրության 72%-ը, տավարի մսի 79%-ը, ցորենի 45%-ը և կարտոֆիլի 77%-ը
- ❖ Քենիայում՝ կաթնամթերքի շուկայի 76%-ը
- ❖ Դանիայում՝ մանրածախ շուկայի ավելի քան 30%-ը:

Այսպիսի բազմաթիվ օրինակները ցույց են տալիս, որ ֆերմերային ակումբների ստեղծումն ու դրանց ընդլայնումը կարևորագույն դեր կարող են ունենալ Հայաստանի գյուղատնտեսության զարգացումը որակապես նոր աստիճանի հասցնելու գործում:

Հաջողության նախապայմանները

- Ֆերմերային ակումբները պետք է տեսանելի և շոշափելի օգուտներ ապահովեն իրենց անդամների համար:
- Պետք է ընտրվեն բիզնես-քաղաքականություն վարելու ընդունակ փորձառու և շահագրգիռ ղեկավարներ:

- Ձևավորվող ակումբների կառուցվածքն ու կառավարումը պետք է համապատասխանի անդամների կարողություններին, ունակություններին ու հմտություններին, ինչպես նաև նրանց շահագրգռվածությանը:

Ակումբներ ստեղծելու և միասին աշխատելու առավելությունները

Ֆերմերների համատեղ գործողության արդյունքում նրանց հնարավորություն է տրվում դժվարությունները միասին հաղթահարելու փոխարեն օգտվել համատեղ աշխատանքի մի շարք առավելություններից: Համատեղ աշխատանքի գործունեության պայմաններում ֆինանսական ռեսուրսներից օգտվելու հնարավորությունն ավելանում է, և բուն գործընթացն ավելի դյուրին է դառնում, քան անհատական գործունեության արդյունքում՝ հզորացնելով մարդկանց ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական կարողությունները:

Համատեղ գործունեության ընթացքում

- կբարձրանա գյուղացիական տնտեսությունների գործունեության արդյունավետությունը և ոլորտում տնտեսվարողների մրցունակությունը
- կընդլայնվեն գործող ֆերմերային ակումբների կարողությունները
- համատեղ գործունեությունը կնպաստի գյուղական համայնքների զարգացմանը
- կբարձրանա գյուղական բնակչության զբաղվածության մակարդակը
- կավելանան գյուղատնտեսական մթերքների և դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ծավալները, որի արդյունքում էլ՝ բնակչության եկամուտները, և կբարձրանա երկրի պարենային անվտանգության մակարդակը
- պայմաններ կստեղծվեն հողային ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործման համար
- ֆերմերային ակումբների միջոցով հեշտությամբ կլուծվեն գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների և մատակարարումների հարցերը, արտադրանքի իրացումը, արտահանումը, արտադրության նախընտրելի մասնագիտացումը, նոր տեխնոլոգիաների ներդրման, արտադրության վերազինման խնդիրները:

Երիտասարդ ֆերմերների ակումբների ստեղծումն անհատ ֆերմերներին լայն հնարավորություններ կընձեռի՝ սկսած սեփական տնտեսության եկամուտների ավելացում բարձրացումից մինչև սոցիալական ու բնապահպանական պատասխանատվությունը՝ այդպիսով նպաստելով ընդհանուր արժեքներով առաջնորդվելու, համայնքների բարեկեցությունը ապահովելու գյուղացու պատրաստակամությանը:



Ֆերմերային տնտեսությունների ստեղծումը շահավետ բիզնես է, որը չի կորցնի իր արդիականությունը: Ներկայումս Հայաստանում այս ոլորտում չկա բարձր մրցակցություն, բայց կա սպառողական մշտական պահանջարկ:

Քիչ գործարարներ են որոշում ներդրումներ կատարել այս ոլորտում, մտածելով, որ դա չափազանց թանկ է և ոչ այնքան շահավետ: Այնուամենայնիվ, այս կարծիքը սխալ է: Գյուղատնտեսությունը այսօր ձեռներեցության առավել հեռանկարային ոլորտներից մեկն է:

Սեփական ֆերմերային տնտեսության համար կատարված ծախսերը փոխհատուցվում են միջինը 2-3 տարում, ինչից հետո, տնտեսությունն սկսում է ստանալ մաքուր շահույթ: Հետագայում ֆերմերները կարող են իրենց գործունեությունը ընդլայնել, դարձնել ավելի մասշտաբային:

Որպես օրինակ կարելի է դիտարկել միս արտադրող անասնապահությունը:

Առաջինը՝ խանութներում վաճառվող մսի գինը բավական բարձր է, երկրորդը՝ մեր երկրում բուսական սննդի կողմնակիցների քանակը փոքր է: Այս ամենն երաշխավորում է արտադրանքի



շահութաբերությունը և կայուն պահանջարկը: Իհարկե, ֆերմերային տնտեսության այս ճյուղը մեծ ներդրում է պահանջում, հատկապես, եթե դա վերաբերում է խոշոր եղջերավոր անասունների բուծմանը:

Խոզաբուծության ոլորտում սկսված բիզնեսը համեմատաբար ավելի էժան է, և ավելի կարճ ժամկետում է փոխհատուցվում: Միևնույն ժամանակ, այս ապրանքի պահանջարկը մեր երկրում բարձր է, շնորհիվ իր ավելի ցածր արժեքի, քան տավարի մսի արժեքն է:

Մեկ այլ տարբերակ՝ թռչնաբուծությունը շատ շահավետ բիզնես է: Ձուն, թռչնի միսը, այն ապրանքներն են, որոնք միշտ առկա են մեր հայրենակիցների սառնարանում: Հայաստանում հավի միսը համարվում է բարձր որակի դիետիկ միս: Ձվի պրոտեինը յուրացվում է 96-98%-ով և պարունակում է բոլոր անփոխարինելի ամինաթթուները:

Բացի այդ, թռչունների բուծումը չի ենթադրում չափազանց մեծ ներդրումներ և տարածք:

Ցանկացած շինություններ, որոնք ունեն լավ տանիք, կարող են օգտագործվել որպես թռչնանոց՝ նախապես լուծելով օդափոխանակության և լուսավորության խնդիրները: Թռչնանոցներում հավերը պաշտպանված են վատ եղանակից, շոգից, անձրևից, քամուց, շներից և այլ կենդանիներից: Ճիշտ խնամքի և լավ կերակրվելու դեպքում, առողջ ձվատու հավերը շատ ձու են ածում, 10 հավից հնարավոր է ստանալ 7 ձու:



Համեմատաբար քիչ ներդրումներ անելով կարելի է պահել, բազմացնել հավ, սագ, հնդկահավ, բադ: Լորի ձվի արտադրությունը նույնպես դարձել է շահավետ ուղղություն:

Իսկ ամենահեշտ և շահավետ ուղղությունը հավերի բուծումն է, քանի որ հավերին պետք հատուկ խնամք, միսը սիրում են գրեթե բոլորը. Իսկ ձվի, աղվափետուրի և փետուրի վաճառքը ևս, բերում է լրացուցիչ եկամուտ:



չէ

Մշակաբույսերի, բանջարեղենների սեզոնային բիզնես է:

արտադրությունը որոշակի իմաստով

Այնուամենայնիվ, դա չի վերաբերվում, օրինակ, վարունգի, լոլիկի, կանաչու, ելակի, սունկի արտադրությանը : Նրանք կլոր տարի կարող են աճել ջերմոցներում և, կախված աճող մշակաբույսի տեսակից, կարող են 1 տարվա մեջ 3-6 անգամ բերք տալ, ինչը անկասկած, շահավետ է դարձնում այս գործը ձմռանը, երբ զգալիորեն ավելանում է թարմ բանջարեղենի գինը: Բիզնեսը շահույթը բերում է արդեն 12-18 ամիս հետո:



Հայաստանում՝ ֆերմերային բիզնեսի ոլորտում, նոր ճյուղ կարող է համարվել թակարժեք մորթիով կենդանիների բուծումը: Իր գոյության, համեմատաբար, կարճ ժամանակահատվածում, այն ապացուցել է իր նպատակահարմար և շահավետ լինելը: Ինչպես օրինակ՝ ճագարաբուծությունը, որ նույնպես համարվում է հեռանակարային ոլորտ, որտեղ պահանջվում է համեմատաբար քիչ ծախսեր և ջանքեր: Ճագարների արագ հասունանալը և մեծ քանակությամբ բազմանալը թույլ են տալիս մեկ նապաստակից, տարեկան 30 կամ ավելի, նապաստակ ստանալ, մոտավորապես 60-70կգ միս (կենդանի քաշով), 25-30 մորթի: Ճագարների կերակրման և խնամքի պայմանների գրագետ կազմակերպման դեպքում 1կգ միս ստանալու համար սպառվում է ընդամենը 3,3-3,5կգ կեր:



Բացի այդ ճագարների միսը աչքի է ընկնում բարձր սննդային հատկանիշներով: Քիմիական, բիոքիմիական և տեխնոլոգիական հատկանիշների շնորհիվ, այն գերազանցում է այլ կենդանիների միսը:



Ճագարի միսը խոհուրդ է տրվում, որպես դիետիկ սնունդ, նույնիսկ երեխաների և ծեր տարիքի մարդկանց համար, ինչպես նաև ստամոքսի, լյարդի, սիրտանոթային համակարգի հիվանդություններ ունեցող մարդկանց: Ճագարի միսը պարունակում է նվազագույն քանակությամբ խոլեստերին

(սկլերոտիկ նյութ) և 2-3 անգամ ավելի լեցիտին, (քան այլ կենդանիների միսը), ինչը խոչնդոտ է հանդիսանում խոլեստերինի սինթեզին:

Կյանքի չորս ամսվա ընթացքում ճագարները 40 անգամ ավելացնում են իրենց նախնական քաշը, և մինչև 3-4 ամսական դառնալը իրենց քաշը կարող է հասնել 1000-1200գ-ի: Ճագարի բուծման երկրորդ կարևորագույն արտադրանքը մորթին է, որը կազմում է երկրի, մորթեղեն արտադրանքների, հումքի զգալի մասը:

Ճագարները կարող են սնվել սննդի տարբեր տեսակներով, այդ թվում էժան կանաչեղենով, մոլախոտերով, մարդու սննդի մնացորդներով: Նույնիսկ բուծման ինտենսիվ մեթոդներ կիրառելու դեպքում, նապաստակները քիչ պահանջկոտ են սննդի հարցում և պակաս կերակուր են օգտագործում, քան մյուս գյուղատնտեսական կենդանիները: Հետևաբար ունեն սննդի ակախ բազա: Այս բոլոր գործոնները ճագարաբուծությունը դարձնում են հրապուրիչ և շահավետ հեռանկար ունեցող բիզնես, ֆերմերային ակումբների համար:

Շուկայի, և ընդանրապես էկոնոմիկայի, ներկայիս պայմաններում, ֆերմերների համար մեկ այլ շահավետ և հրապուրիչ ուղղություն կարող է դառնալ շինձիլաների բուծումը, որոնց պահանջարկը շատ մեծ է: Այս կենդանու մորթին շատ բարձր է գնահատվում և աշխարհում ամենաթանկ մորթիներից մեկն է: Համաշխարհային վարկանիշով գտնվում է 4 հորիզոնականում, 11 ամենաթանկ մորթիների շարքում: Իսկ՝ նրանց խնամելու համար, 1 ամսվա կտրվածքով կատարված ծախսը 2-3 դոլարի սահմաններում է: 1 մուշտակի համար օգտագործվում է 70-ից մինչև 150 հատ մորթի, իսկ պատրաստի մուշտակների գինը սկսվում է 20 հազար դոլարից մինչև 200 հազար դոլար: Եթե շինձիլաների բուծման համար աշխատանքները կազմվում են զրազետ, և կատարվում է ճշգրիտ խնամք, ապա բիզնեսի մեջ ներդրված միջոցները փոխհատուցվում են 1-1,5 տարի հետո: Բացի այդ, այդ կենդանիների միսը գնահատվում է որպես դիետիկ սնունդ: Այն յուղոտ չէ, իսկ սննդային արժեքը բարձր է: Շինձիլայի միսը համարվում է բուժիչ տուբերկուլյոզ և սկլերոզ հիվանդությունները բուժելու համար:



Մասնագիտացումը և ճյուղերի ռացիոնալ զուգակցումը գյուղատնտեսությունում

Հանրապետությունում ձևավորված գրեթե բոլոր գյուղացիական տնտեսությունները բազմաճյուղ են և այստեղ կարևորվում է ճյուղերի ռացիոնալ զուգակցումը: Ճյուղերը հնարավոր է զուգակցել, եթե նրանց մեջ կա տեխնոլոգիական և կազմակերպական կապ: Ճյուղերի հնարավոր զուգակցման օրինակներից են՝

1. բանջարաբուծությունը լավ զուգակցվում է խաղողագործության և պտղաբուծության հետ՝ գյուղացիական տնտեսությունները կարող են միջվազային տարածություններն օգտագործել բանջարեղենի արտադրության համար,

2. բանջարաբուծությունը կարելի է զուգակցել վաղահաս կարտոֆիլի հետ, քանի որ կարտոֆիլը լավ նախորդ է բոլոր բանջարեղենների համար,
3. բանջարաբուծությունը լավ զուգակցվում է տավարաբուծության հետ,
4. պտղաբուծությունը լավ զուգակցվում է մեղվաբուծության հետ՝ 1 հա 1-2 մեղվաընտանիք,
5. պտղաբուծությունը կարելի է զուգակցել կաթնային և կաթնամսային տավարաբուծության հետ՝ 1հա 1-2 գլուխ պայմանական խոշոր եղջերավոր անասուն,
6. բանջարաբուծությունը, խաղողագործությունը և պտղաբուծությունը կարող են լինել որպես վերամշակող ձեռնարկությունների օժանդակ ճյուղ:

Հանրապետությունում արդեն գործում են մի քանի ֆերմերների միավորման հասարակական կազմակերպություններ, ինչպիսիք են օրինակ՝ «Ֆերմերական տնտեսությունների միավորում» ՀԿ-ն, «Տավուշի ֆերմերների ասոցիացիա» ՀԿ-ն, «Ստեփանավանի ֆերմերների ընկերակցություն» ՀԿ-ն, «Արթիկի մեղվաբույծների և ֆերմերների ասոցիացիա» ՀԿ-ն, «Կապանի փոքր ֆերմերների ասոցիացիա» ՀԿ-ն, «Ֆերմերների ազգային միավորում» խորհուրդը և այլն, որոնք միավորում են ֆերմերների՝ միևնույն գործին ուղղված ուժերը:

Ֆերմերային ակումբներն, արդյունավետ աշխատանքի դեպքում, կարող են վճռորոշ դեր խաղալ հանրապետության ներկա ագրարային խնդիրների հանգուցալուծման և գյուղատնտեսության հետագա զարգացման գործում:

Ակնհայտ է, որ գրագետ և նպատակաուղղված աշխատանքների արդյունքում, ֆերմերների ակումբները կարող են իրական հարթակ դառնալ մատակարարողների և ֆերմերային ապրանքների պահանջարկի, ներդրողների և մատակարարների որոնման համար:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):